

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ  
ԿԱՐԾԻՔ**

**Ռուս-Հայկական /Սլավոնական/ համալսարանի ասպիրանտ Աշոտ Ռաֆիկի  
Բաղդասարյանի «Ոչ դասական տրամաբանության ֆորմալ համակարգեր և  
թեորեմների մեքենայական արտածելիություն մեքենայական ուսուցման  
մեթոդների կիրառությամբ» թեմայով թեկնածուական ատենախոսության  
վերաբերյալ**

Աշոտ Ռաֆիկի Բաղդասարյանի ատենախոսությունում կառուցված են երկարժեք և մոդալ տրամաբանությունների մինիմալ ենթահատվածի առաջին կարգի մի շարք նոր ֆորմալ համակարգեր, ապացուցված են դրանց համարժեքությունները հանրահայտ համակարգերի հետ, ինչպես նաև, կիրառելով մեքենայական ուսուցման մեթոդները, առաջարկված են արտածումների ավտոմատացված որոնման ալգորիթմներ: Մասնավորապես ստացված հիմնական արդյունքները հետևյալն են՝

1. Հարստացնելով ավանդական համակարգերը նոր, հիշողությամբ օժտված, արտածման կանոններով, ինչպես նաև որոշակի սահմանափակումներ դնելով արտածման հայտնի կանոնների վրա, կառուցվել են առաջին կարգի նոր  $GM_P$ ,  $SwMin$  և  $ScMin$  ֆորմալ համակարգերը երկարժեք մինիմալ տրամաբանության համար /Գլուխ 2/ և  $GM_{S4}$ ,  $S4_{Min}^*$ ,  $S5_{Min}$  և  $SwMin_{S4}$  համակարգերը մոդալ տրամաբանության մինիմալ հատվածի համար /Գլուխ 4/, որոնք նպատակաուղղված են «հեշտացնել» այդ տրամաբանություններում արտածման որոնման գործընթացը: Յուրաքանչյուր նոր համակարգի համար ապացուցված է նրա համարժեքությունը հայտնի, ավանդորեն կիրառվող, համակարգերի հետ:
2. Կիրառելով մեքենայական ուսուցման տարբեր գործիքակազմերը, մասնավորապես ռեկուրենտ նեյրոնային ցանցերը, կատարվել է մեծածավալ կիրառական աշխատանք՝ երկարժեք մինիմալ տրամաբանության կառուցված համակարգերի համար տրվել են դրանցում արտածումների ավտոմատացված որոնման մի քանի նախնական ալգորիթմներ, կատարվել են դրանց օպտիմիզացիաները, ինչպես նաև համեմատվել են

այդ ալգորիթմների արդյունավետությունը բազմաթիվ բանաձևերի արտածումների գործընթացների համար /Գլուխ 3/:

Աշոտ Ռաֆիկի Բաղդասարյանի հիշատակված երկրորդ և չորրորդ գլուխների խիստ ապացուցված տեսական արդյունքները, որոնք կարող են հանդիսանալ հարուստ հիմք հետագա հետազոտությունների համար, նոր են, հետաքրքիր են, ունեն արտահայտված կիրառական բնույթ, ինչը և լիովին հիմնավորվել է երրորդ գլխում: Հիշատակված բոլոր արդյունքները կարող են դիտարկվել որպես էական ներդրում տարբեր տրամաբանություններում արտածումների հետազոտման բնագավառում և կարող են դառնալ հետաքրքիր գործիքակազմ SS ոլորտի տարբեր կիրառություններում :

Ա. Բաղդասարյանի ատենախոսությունը գերծ չէ թերություններից՝ առկա են վրիպակներ, ոչ հայեցի կառուցվածքով նախադասություններ և ոչ հայերեն տերմինների օգտագործում՝ օտարալեզու «աքսիոմ» հայերեն «հենասույթ»-ի փոխարեն, կամ «ինդուկցիոն» եղանակը «մակաձման» եղանակի փոխարեն: Նշված թերությունները, սակայն, էական չեն ատենախոսության ընդհանուր գնահատականի համար:

Ատենախոսության շրջանակներում տպագրվել են 7 աշխատություններ, որոնցում լիարժեքորեն ընդգրկված են ատենախոսության հիմնական արդյունքները, իսկ սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Աշոտ Ռաֆիկի Բաղդասարյանի կողմից ներկայացված ատենախոսությունը լիովին համապատասխանում է Ա.01.09 «Սաթեմատիկական կիրեռնետիկա և մաթեմատիկական տրամաբանություն» մասնագիտությանը, իսկ հեղինակը արժանի է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս  
Ֆ.մ.գ.թ., դոցենտ



Ս.Ս. Սայադյան

Ֆ.մ.գ.թ. Սերգեյ Մուշեղի Սայադյանի  
ստորագրությունը հաստատում եմ՝



Է.Հ. Դանոյան

20.12.2021